ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«26» նոյեմբերի 2015 թ. N 248-Ա

«ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետով.

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ Ա. Հարությունյանին՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում 2015 թվականի նոյեմբերի 25-ին կայացած ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/19-1 ծածկագրով մրցույթի շրջանակներում ձեռք բերված 2000 կիլոգրամ «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցն (այսուհետ՝ պաշտպանության միջոց) եռօրյա ժամկետում հանձնել «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն) :

2. Կազմակերպության տնօրեն Ա. Ավագյանին՝ ապահովել հանձնված պաշտպանության միջոցի պահպանությունը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի առաջին տեղակալ Գ. Բաղիյանին և նախարարի տեղակալ Ս. Գալստյանին:

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ